

Համարը թիվ 1  
Տիպը Պաշտոնական պարզաբանում  
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2010.09.01/20(372)  
Ընդունող մարմինը Արդարադատության նախարար  
Ստորագրող մարմինը Արդարադատության նախարար  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.08.2010

Տեսակը Մայր  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 24.08.2010  
Ստորագրման ամսաթիվը 24.08.2010  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ **Կապեր այլ փաստաթղթերի հետ**  
[05.05.1998 ՀՕ-239 ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԶ](#)

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 24 ՕԳՈՍՏՈՍԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

24 օգոստոսի 2010 թ.

թիվ 1

## Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի կիրառման նպատակով և հիմք ընդունելով այն, որ.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ խնամակալ կամ հոգաբարձու նշանակում է խնամակալության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ մեկ ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ նշված մարմինն հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտությունը: Խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի նկատմամբ, մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները իրականացնում է խնամակալության կամ հոգաբարձության մարմինը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ «անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում, նրա գույքը դատարանի վճռի հիման վրա տրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի նշանակած անձին, որը գործում է այդ մարմնի հետ կնքված հավատարմագրային կառավարման պայմանագրի հիման վրա» և «խնամակալության և հոգաբարձության մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է բացակայող քաղաքացու գտնվելու վայրի մասին վերջին տեղեկություններ ստանալու օրվանից մինչև մեկ տարին լրանալը, դատարանի վճռի հիման վրա, նրա գույքի կառավարիչ նշանակել»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու մասին՝ դատարանի վճռի հիման վրա, բացակայողի գույքի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինն այդ գույքի նկատմամբ խնամակալություն է սահմանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով՝ **պաշտոնապես պարզաբանում ենք՝**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 37-րդ, 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կայացնում է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճիռ, իսկ գույքի նկատմամբ խնամակալությունը նշանակվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից՝

քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճռի հիման վրա:

**Գ. Ղանիելյան**